600.0586.27.12.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2017 թվականի №586Ա
քաղ. Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈԳԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԳԱԶԱՏՈՒՐԲԻՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի «Alstom» GT-13E2 MXL/MCL տիպի գազատուրբինի վերակառուցմանն ուղղված ներդրումային ծրագրին՝ 5,97 մլն եվրո ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

   1) «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի «Alstom» GT-13E2 MXL/MCL տիպի գազատուրբինի՝ MXL2 ռեժիմի վերակառուցմանն ուղղված ներդրումային ծրագիրը կազմում է 20,68 մլն եվրո՝ առանց ավելացված արժեքի հարկի, այդ թվում.

   ա. էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկներով նախատեսված նորոգման ծախսերում կուտակված միջոցներ՝ 11,37 մլն եվրո.

   բ. վերադարձվող պահեստամասերի արժեքից նվազեցումներ՝ 3,34 մլն եվրո.

   գ. ներդրումային ծրագրի շրջանակում կապիտալ նորոգումներին ուղղված ծախսեր՝ 5,97 մլն եվրո:

2) Սույն որոշման առաջին կետում նշված ներդրումային ծրագրի իրականացումից հետո ակնկալվող ցուցանիշները, մասնավորապես, զազատուրբին և օժանդակ սարքավորումներ՝ 186,9 ՄՎտ, ՕԳԳնետ-ն՝ 48.6%, C ինսպեկցիաների քանակը՝ 3 հատ, միջակայքը՝ 6 տարին մեկ անգամ, առաջին C ինսպեկցիան 2018 թվականին, կամրագրվեն լիցենզիայի պայմաններում և հաշվի կառնվեն ընկերության հետագա սակագների հաշվարկման ընթացքում.

3) ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքները կատարելուց հետո, Հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 20-ի №194Ա որոշմամբ հաստատված №0350 լիցենզիայի պայմաններում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով, անհրաժեշտ է Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգին համապատասխան դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
27 դեկտեմբերի 2017թ.